

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՁԲՈՒՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ
ՂԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 2005թ. նոյեմբերի 27-ի փոփոխությունների շնորհիվ Հայաստանում ոչ միայն էապես ուժեղացավ սահմանադրական արդարադատությունը, այլև հիմքեր ստեղծվեցին վարչական արդարադատության ինստիտուցիոնալացման համար, որովհետև այդ փոփոխությունների հետևանքով հստակորեն սահմանազատվեցին սահմանադրական դատարանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը, այդ դատարանին ենթակա գործերի շրջանակը և որոշումներ կայացնելու իրավասությունները, դրանով իսկ ճանապարհ բացելով վարչարարության նկատմամբ սահմանադրական դատարանի ենթակայությանը չհանձնված վեճերով դատական հսկողության, այսինքն՝ դատավարության առանձին տեսակի ստեղծման համար: Մինչ այդ Հայաստանում վարչական դատարաններ և վարչական դատավարություն գոյություն չուներին¹, հիշյալ գործերը քննվում և լուծվում էին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Քաղ. դատ. օր.) 23-րդ գլխի կանոններով՝ որպես «Հատուկ հայցային վարույթներ»²:

Վարչական արդարադատության համար իրավական բազա հանդիսացան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, ՀՀ դատական օրենսգիրքը (այսուհետ՝ Ղատ. օր.) և ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԴՕ), որոնք համապատասխանաբար ընդունվեցին 2004թ. փետրվարի 18-ին, 2007թ. փետրվարի 21-ին և 2007թ. նոյեմբերի 28-ին: Բնական է, որ վարչական դատավարության, այդ թվում՝ մրցակցության և կողմերի իրավահավասարության սկզբունքի ձևավորման վրա իրենց էական որակական ազդեցությունն ունեցան քաղաքացիական և քրեական դատավարություններում դարերով գործառող դատավարական սկզբունքները, պատմության ընթացքին ուղեկցող դատավարության մրցակցային ձևի ընկալումները, դրա կիրառման տևական պրակտիկան: Կյանքը ցույց էր տվել, որ վարչական իրավունքի և վարչական դատավարության միատեղ (այսպես կոչված՝ խառը) իրավակարգավորումը (կողիֆիկացիան) չի արդարացնում իրեն, քանի որ վարչական դատավարական ընթացակարգի մասով չի ներառում քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ միջոցներ, մանավանդ որ ներկայումս

շատացել և բարդացել են վարչական իրավախախտումների իրավաբանական կազմերը³: ՎՊՕ-ն հանդիսանում է վարչական պատասխանատվության նյութա-իրավական նորմերի իրացման դատավարական ձևը, նոր (երիտասարդ) իրավաբանական ընթացակարգը, որտեղ հատուկ նշանակություն է ձեռք բերում մրցակցության սկզբունքը, որովհետև այն, չնայած որ չէր ամրապնդված ՎԻՎՕ-ում, բայց «ընթացվում էր» դրա բազմաթիվ նորմերում՝ ընդօրինակ վարույթի մասնակիցների ակտիվ դերը⁴: Եվ իրոք, մրցակցության սկզբունքի հիման վրա է որոշվում կողմերի իրավական դիրքորոշումը վարչական դատավարությունում: Դրանով են ամրապնդվում իրավունքի (օրինական շահի) պաշտպանության դատավարական միջոցները, մեկ կողմից՝ վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ մյուս կողմից՝ բոլոր քաղաքացիների և իրավաբանական անձանց, այլ խոսքով՝ վարչական հետապնդման և պաշտպանության կողմի դատավարական իրավունքների հավասարությունը, որ գոյություն չունեն վարչական վարույթում:

Սասնազիտացված վարչական դատարանը սկսեց գործել 2008թ. հունվարի 1-ից:

«Վարչական արդարադատության ... ստեղծումը նշանակում է, որ պետության գործադիր մարմիններն ... ստիպված կլինեն հաշվի առնել այն հանգամանքը, որ մասնավոր անձինք (քաղաքացիներ, տնտեսական ձեռնարկություններ և այլն) դատարանում կարող են ստուգել պետության վարչական վերնաշենքի բոլոր աստիճանների վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց չարաշունների իրավաչափությունը: Սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության իրավական պետություն լինելու ծագումն այժմ ավելի որոշակիորեն կլցվի կյանքով (կարելի է արձանագրել, որ արդեն լցվել է՝ Գ.Պ.) և կամրապնդվի երկրի իրավակարգում ու վարչական պրակտիկայում, քան մինչև հիմա»⁵:

Կողմերի իրավահավասարության հիման վրա ընթացող դատական քննության մրցակցության սկզբունքը վարչական դատարանում, ինչպես որ բոլոր տեսակի դատավարական ընթացակարգերում (սահմանադրական, քաղաքացիական, վարչական, քրեական դատավարություններում), Հայաստանում⁶ այսօր անվիճելիորեն ընդունված է որպես այդ ընթացակարգի կառուցման ձև, մեթոդ (Պատ. օր. 17, ՎՊՕ 5-րդ հոդվածներ): Այդ սկզբունքի ճանաչումը և իրականացումը միանգամայն համահունչ է իշխանությունների բաժանման և օրենքի ու դատարանի առջև բոլորի հավասարության միջազգային ու սահմանադրական դրույթների հետ (Սահմանադրության 5 և 14.1-րդ հոդվածներ):

Մրցակցությունը կողմերի իրավահավասարության հիման վրա իրականացվելու սկզբունքը վարչական դատավարությունում ունի ստորև բերվող որոշակի առանձնահատկություններ:

Առաջին՝ վարչական դատավարության իրավունքը նախևառաջ պետք է կարգավորի այն հարցը, թե գործերի ինչ շրջանակ է ներառում վարչական դատավարությունը, այլ կերպ՝ ովքեր և ինչ կատեգորիայի գործերով կարող են դիմել դատարան քննարկվող վարույթի կարգով: Այս հարցերի պատասխանները տրված են ՎՊՕ 8, 11-13, 135-136, 143-144, 151, 154 և 161-րդ հոդվածներում, որոնցից բխում է, որ վարչական դատարանին ընդդատյա են հանրային (քաղաքացի-պետություն) և ոչ թե մասնավոր (քաղաքացի-քաղաքացի) իրավահարաբերություններից ծագող գործերը, որոնց քննության ժամանակ դատարանն ստուգում (վերահսկում) է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների, դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության), որոշումների և դրանց կողմից ընդունված անհատական կամ նորմատիվ ակտերի օրինականությունը, այդ թվում՝ ա) հանրային կամ այլընտրանքային ծառայությանն անցնելու կամ իրականացնելու հետ կապված, բ) վարչական մարմինների միջև վերադասության կարգով լուծման ոչ ենթակա (նրանց լուծմանը չհանձնված), գ) հանրային իրավունքի բնագավառում գործող կամ գործելու նպատակ ունեցող միավորումների գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու գործերը:

Վարչական դատավարության քննարկման առարկա հանդիսացող վարչական իրավահարաբերությունների բնույթը և սուբյեկտային կազմը, այս գործերով ապացույցների ձեռքբերման հարցում դատարանի ակտիվությունը, գործերը կարճատև ժամկետներում քննելու հնարավորությունը, ինչպես նաև այստեղ մրցակցության սկզբունքի կիրառման որոշ սահմանափակումների անհրաժեշտությունը հաշվի առնելով՝ օրենսդիրը դատավարության այս ձևով քննարկվող հինգ կատեգորիայի գործեր հատկապես առանձնացրել և կարգավորման է ենթարկել որպես «Չատուկ վարույթներ»⁷: Դրանք են՝ 1) նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու, 2) ընտրական իրավունքի պաշտպանության, 3) դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու, 4) վճարման կարգադրություն արձակելու և 5) նոտարական գործողությունների վիճարկման վերաբերյալ գործերի վարույթները: Այս բոլոր վեճերում դատավարության շարժիչ ուժը իշխանական (վարչական, ֆինանսական, հարկային և այլն) կամ վարչաիրավական այլ հարաբերություններից ծագող վեճերն են, որոնք հանրային-իրավական նշանակություն

ունեն: Այս բոլոր վեճերով դատարանը վարչական դատավարության ծնով մի կողմից քաղաքացու, մյուս կողմից՝ պետական կառավարման մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի, դրանց պաշտոնատար անձանց կամ քաղաքացու և այլ կազմակերպության (օրինակ՝ ՀՀ կենտրոնական բանկի կամ նոտարական մարմնի) միջև վարչաիրավական հարաբերություններից ծագած վեճ է լուծում: Եթե քաղաքացիները ու նշված պետական և տեղական կառավարման մարմինները, քաղաքացիները ու այլ կազմակերպությունները մինչև դատարանում գործ հարուցվելը գտնվում էին պետական, վարչական, ֆինանսական, հարկային, մաքսային և այլ հարաբերություններում, որտեղ կողմերը հավասար չեն, ապա վարչական (բառիս լայն առումով) իրավունքի մասին վեճ ծագելու և դատարան դիմելու դեպքում և՛ քաղաքացին, և՛ պետական կամ այլ մարմինը (պաշտոնատար անձը) վարչական դատավարությունում դառնում են լրիվ իրավահավասար կողմեր և սկսում են մրցակցել՝ ունենալով հավասար դատավարական հնարավորություններ⁸:

Երկրորդ՝ վարչական դատավարությունում գործը հարուցվում է հայցի հիման վրա: Ըստ որում՝ օրենսդիրը հստակորեն սահմանում է վարչական հայցերի տարբեր տեսակների (վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման, ճանաչման, սրանց հետ՝ նաև հետևանքների վերացման) ներկայացման ժամկետները, որոնք, իհարկե, մրցակցության սկզբունքի տեսակետից որևէ նշանակություն չունեն: Մրցակցային դատավարության կանոնավոր իրականացման համար էական նշանակություն ունեն ՎԴՕ 72-րդ հոդվածի 2-րդ մասի 4-7 և 9-րդ կետերում նշված հանգամանքները հայցադիմումի մեջ անպայմանորեն նշելու պահանջները, որոնք են՝ հայցի էության հակիրճ նկարագրությունը (ոչ միայն դատական ստուգման առարկան, այլև վարչական մարմնի այն ակտը, որոշումը, գործողությունը կամ անգործությունը, որոնք հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել), հայցվորի պահանջը, դրա իրավական հիմքերը, այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը, և այն ապացույցների ցանկը, որոնք հաստատում են հայցվորի պնդած փաստերից յուրաքանչյուրը՝ համապատասխան նշումով, թե ինչ փաստի հաստատմանն է այն ուղղված, նաև այն, թե հայցադիմումին ինչ փաստաթղթեր են կցվում (դրանց ցանկը): Այն դեպքում, երբ գործով որպես պատասխանող հանդես է գալու վարչական մարմինը կամ պաշտոնատար անձը, հայցվորը հայցադիմումի և դրան կցվող փաստաթղթերի պատճենն ուղարկում է նաև պետական ֆինանսների կառավարման մարմնին (ՎԴՕ 72-73-րդ հոդվածներ): Միայն այս կերպ պատասխանողը (վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի վերադասը)

կարող է լիարժեք նախապատրաստվել դատական քննությանը, օրենքով սահմանված ժամկետում դատարան ուղարկել հայցադիմումի պատասխանը, հակընդդեմ հայց ներկայացնել և այլն, իսկ դատարանը՝ կատարել նախապատրաստական գործողություններ (ՎՊՕ 83-84, 86-րդ հոդվածներ):

Երրորդ՝ վարչական դատավարությունում, որպես կանոն, կողմերից մեկը պետական (հանրային) իշխանության, տեղական ինքնակառավարման մարմիններն են կամ դրանց պաշտոնատար անձը, բայց այստեղ այդ սուբյեկտները հայցվոր կամ պատասխանող կողմ հանդիսացող քաղաքացու նկատմամբ որևէ առավելություն չունեն: Հենց դրա համար էլ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների ապացուցման բեռը, որպես կանոն, բաշխվում է երկու կողմերի վրա հավասարապես: Դատավարական մյուս ընթացակարգերի (օրինակ՝ քաղաքացիական դատավարության) մեան, այստեղ ևս յուրաքանչյուր կողմ պարտավոր է իր պահանջների և առարկությունների հիմնավորման համար ապացույցներ ներկայացնել: Այստեղ երկու կողմերն էլ իրավունք չունեն ոչնչացնելու կամ թաքցնելու որևէ ապացույց կամ որևէ այլ եղանակով խոչընդոտելու դրա հետազոտմանը և գնահատմանը՝ դատավարության մյուս կողմի համար անհնարին կամ դժվարին դարձնելով ապացույցներ հավաքելը և ներկայացնելը: Նման դեպքում դատարանը կարող է խոչընդոտող կողմի վրա դնել հակառակի ապացուցման բեռը, այսինքն՝ վերահասցեագրել ապացուցման պարտականությունը (ՎՊՕ 25-րդ հոդվ. 1-ին, 26-րդ հոդվ. 2-րդ և 4-րդ մասեր): Ըստ որում՝ ամբողջ վարչական դատավարությունը և ամենակարևոր՝ ապացուցողական և կողմերի մրցակցային գործունեությունն իրականացվում է նրանց իրավահավասարության հիման վրա (ՎՊՕ 5-րդ հոդվ.):

Էլենելով վարչական դատավարության կողմերի իրավահավասարություն և նրանց միջև մրցակցության հավասար հնարավորություններ ապահովելու շահերից, նկատի ունենալով, որ վարչական մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից իրավական ակտեր կամ քաղաքացիների խնդրանքներով զանազան հարցերով որոշումներ ընդունելիս, նրանց վարչական պատասխանատվության ենթարկելիս և այլն, ապացույցները հիմնականում կենտրոնացվում են այդ մարմինների ու պաշտոնատար անձանց մոտ, և քաղաքացիները կոժվարանան ապացուցել դրանց ակտերի օրինաչափությունը, դրանց գործողությունների օրինականությունը կամ հակաօրինականությունը, օրենսդիրը, պահպանելով մրցակցության սկզբունքի վերաբերալ վերը նշված հիմնական կանոնը, այնուամենայնիվ, այսպես կոչված, «թույլ կողմին» օժանդակելու և գործի իրական հանգամանքները, գործով օբյեկտիվ ճշմարտությունը պարզե-

լու և արդար (արդարացի), օրինական ու հիմնավորված վճիռների կայացումն ապահովելու նպատակով քննարկվող վարույթում մրցակցության հիմնարար սկզբունքից կատարել է որոշակի շեղումներ և նշել, որ՝ 1) «Վարչական մարմինը պարտավոր է նաև ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող այն բոլոր ապացույցները, որոնք հիմնավորում են հակառակ կողմի պահանջները կամ առարկությունները» և 2. «Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (դրանց պաշտոնատար անձը), որն ընդունել է վիճարկվող իրավական ակտը կամ կատարել է հայցվող գործողությունը կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը» (ՎԳՕ 25-րդ հոդվ. 1-ին, 26-րդ հոդվ. 2-րդ և 3-րդ մասեր): Այս առանձնահատկությունը պայմանավորված է նշված գործերի բնույթով, որովհետև դրանցում հանրային շահերը գերակա են մասնավոր շահերի նկատմամբ, և դրանցով կայացված վճիռներն ունեն հատուկ հանրային, պետական նշանակություն:

Չորրորդ՝ դատավարական ընթացակարգի բոլոր տեսակներում դատարանն օժտված է ձևական բնույթի նշանակալից, այդ թվում՝ լրացուցիչ լիազորություններով, որոնք ուղղված են մրցակցության և կողմերի ակտիվության ապահովմանը, բայց դատավարության քննարկվող տեսակում դատարանն օրենքով օժտվում է առավել մեծ ակտիվությամբ: Այստեղ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը դատարանը որոշում և պարզում է ոչ միայն գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, այլև ի պաշտոնե ("ex officio"): Դատարանն է մատնանշում այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի առկայությունը կամ բացակայությունը հաստատող ապացույցներ: Վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով դատարանն իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ, մասնավորապես՝ պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, համձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի (ՎԳՕ 6-րդ հոդվ.): Օրենքի նպատակին համապատասխան՝ դատարանն այս վարույթում դատավարական նյութը տրա-

մադրելը կողմերի վարքագծի հետ չի կապում, այլ ինքն է պարտավոր այդ հայեցողական լիազորություններն իրականացնել, երբ դա է պահանջում կոնկրետ գործը: Այս լիազորություններն իրականացնելիս դատարանին, իհարկե, արգելվում է որևէ խորհրդատավական գործունեություն: Մասնավորապես՝ նա իրավունք չունի կողմերից մեկին միակողմանիորեն խորհուրդ տալ դատավարությունում դիմել այս կամ այն մարտավարությանը: Պարզաբանման և մատնանշման դատարանի պարտականությունը սահմանափակվում է դատավարության բոլոր մասնակիցների նկատմամբ չեզոք դիրք ընդունելու և անկախ որոշում կայացնելու պահանջով: Չպետք է այնպիսի տպավորություն ստեղծվի, թե դատարանը մասնակիցներից մեկի կողմից է⁹:

Հիմնգործող՝ չնայած որ Դատական օրենսգիրքը մրցակցության սկզբունքը հավասարապես ճանաչել է նաև վարչական դատավարության՝ որպես իրավաբանական ինքնուրույն ընթացակարգի ձևերից մեկի համար, այնուամենայնիվ, ՎԴՕ-ն, մեր կարծիքով հանիրաժի, այդ սկզբունքը կարգավորող ընդհանուր դրույթներում «մրցակցություն» եզրույթը չի նշել, ինչը պետք է համարել օրենսդրի բացթողումը: Հարցի նման կիսալուծումը չի բխում ՀՀ դատավարության օրենսդրության մեջ արդեն կատարված ամրագրումներից, մասնավորապես՝ ՎԴՕ 5 և 15-րդ հոդվածներից, որոնցում եղած կարգավորումները ոչ այլ ինչ են, քան մրցակցային լիարժեք դատավարություն: Կողմերի իրավահավասարության հիման վրա վարչական դատավարության իրականացման վերաբերյալ ՎԴՕ 5-րդ հոդվածի պահանջն ինքնանպատակ չէ: Այն առաջին հերթին ուղղված է ապահովելու դեռևս Հին Հռոմից եկած՝ դատարանի կողմից վարույթի կողմերի «լսվելու իրավունքը»¹⁰, որը դատավիճող կողմերի հիմնական իրավունքն է: Դա նշանակում է իրավունք ունենալ տեղեկացվելու դատավարության անցկացման տեղի և ժամանակի մասին, ներկայացնելու գործի հանգամանքները և առաջարկելու բերել ապացույցներ, տեղեկություն ստանալու մրցակցի (դատավիճող հակառակորդի) կողմից ներկայացված գործի հանգամանքների մասին և արտահայտվելու այդ կապակցությամբ, իր դիրքորոշումն արտահայտելու դատարանի պարզած կամ դատարանի կողմից հաշվի առնված հանգամանքների կամ ապացույցների վերաբերյալ: Եթե ՎԴՕ 5-րդ հոդվածը սահմանում է, որ «Վարչական դատարանը պարտավոր է ապահովել, որ կողմերն ունենան հավասար հնարավորություններ գործի քննության ամբողջ ընթացքում, այդ թվում՝ յուրաքանչյուր կողմին ընծեռել քննվող գործի վերաբերյալ իր դիրքորոշումը ներկայացնելու լիարժեք հնարավորություն», իսկ 15-րդ հոդվածը մանրամասնում է վերը նշվածներն իրականացնելու ուղղությամբ կողմերի իրավունքներն ու պարտականությունները նույնիսկ

առավել լայն, քան սահմանադրական, քաղաքացիական կամ քրեական դատավարություններում (տե՛ս համապատասխանաբար «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 47, Քաղ. դատ. օր. 29, 32-33, Քր. դատ. օր. 23-րդ հոդվածները), ապա անհասկանալի է, թե ինչու է օրենսդիրը խուսափել ՎՊՕ-ում մրցակցության սկզբունքի մասին ուղղակիորեն նշելուց: Անվիճելի է, որ ՎՊՕ 5-րդ հոդվածի վերտառության մեջ և բուն տեքստում «մրցակցության սկզբունք»-ի մասին պետք է լրացում կատարել: Հակառակ դեպքում անհասկանալի է դառնում, թե ինչ նպատակով է օրենսդիրը վարչական դատավարությունում կողմերին իրավունք վերապահել՝ 1) ծանոթանալ գործի նյութերին, քաղվածքներ անել, ստանալ դրանց պատճենները, 2) անել ինքնաբացարկ հայտնելու միջնորդություններ, 3) ներկայացնել ապացույցներ և մասնակցել դրանց հետազոտմանը, 4) հարցեր տալ, միջնորդություններ անել, բացատրություններ և ցուցմունքներ տալ դատարանին, 5) գործի քննության ընթացքում ծագած բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց առաջարկներն ու փաստարկները, 6) առարկել գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների կամ փաստարկների դեմ, 7) բողոքարկել դատական ակտերը, կամ ինչու է օրենսդիրը ապացուցման բեռը կամ չապացուցելու բացասական հետևանքները դրել կողմերի վրա (ՎՊՕ 26-րդ հոդվ.): Եթե վարչական դատավարությունում առանց որևէ «խտրականության» օգտագործված են «կողմեր», «հայցվոր և պատասխանող», «հայց և հայցադիմում», «կողմերի իրավահավասարություն», «ապացուցման բեռ» և հայցային վարույթին (ինչպիսին է նաև վարչական դատավարությունը) յուրահատուկ այլ եզրույթներ, ապա անհասկանալի է, թե ինչու չպետք է օգտագործվի նաև «մրցակցության սկզբունք» կառուցակարգը, ինչպես որ դա արել են Ո՞ր Սահմանադրության 118-րդ հոդվածի 2-րդ մասը, 123-րդ հոդվածի 3-րդ մասը և Ղազախստանի Հանրապետության ՎՊՕ 26-րդ հոդվածը: Մրցակցային վարչական դատավարության բովանդակությունն ու էությունը, որոշ առանձնահատկություններով հանդերձ, մուտք են գործել ՀՀ իրավունքի տեսություն և իրավակիրառական պրակտիկա, և կազմում են դատական միասնական ընթացակարգի բաղադրիչները:

Վեցերորդ՝ ելնելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց՝ օրենքին հակասող նորմատիվ ակտերն անվավեր ճանաչելու գործերի առավել բարձր հանրային նշանակությունից՝ օրենսդիրն այդ գործերով մրցակցության ընդհանուր սկզբունքից կատարել է մի էական շեղում. այն դեպքում, երբ վիճարկվում է որևէ նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը ավելի բարձր իրավաբանական

ուժ ունեցող նորմատիվ ակտին, դատարանը դատական ակտ կայացնելիս կարող է ստուգել նաև տվյալ ակտի համապատասխանությունն այլ՝ ավելի բարձր իրավաբական ուժ ունեցող նորմատիվ ակտերին, եթե դա վերապահված չէ ՀՀ սահմանադրական դատարանի իրավասությանը: Ստուգումից հետո պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտին՝ վարչական դատարանն այն անվավեր է ճանաչում այդ հիմքով՝ **անկախ հայցվորի պահանջից** (ընդգծումն իմն է՝ Գ.Պ.): Այսպիսով, նման դեպքերում դատարանը կաշկանդված չէ հայցվորի կողմից հայտարարված պահանջների հիմքերով և փաստարկումներով: Սա, իհարկե, միանգամայն ընդունելի է, սակայն օրենքը չի կարգավորում այն հարցը, երբ պատասխանողն ինքն է ընդունում իրավական ակտի ոչ իրավաչափ լինելը: Կարծում ենք, որ «անկախ հայցվորի պահանջից» կապակցության փոխարեն օրենքում պետք է նշվեր «անկախ կողմերի դիրքորոշումներից», հակառակ դեպքում իրավաչափ ակտը կարող է և անվավեր ճանաչվել, եթե պատասխանողը համաձայնվել է հայցվորի սկզբնական դիրքորոշման հետ: Այլ խոսքով՝ ավելի բարձր իրավաբական ուժ ունեցող նորմատիվ ակտերին հակասող վիճարկվող նորմատիվ ակտը պետք է անվավեր ճանաչվի: Դա նաև նշանակում է, որ դատարանն իր նախաձեռնությամբ վիճարկվող նորմատիվ իրավական ակտը կարող է համեմատել նաև ՀՀ բոլոր և ոչ միայն հայցադիմումում մատնանշված օրենքների և մյուս իրավական ակտերի հետ: Մեր կարծիքով, մրցակցության սկզբունքից վերը նշված բացառությունն անհրաժեշտ է տարածել նաև վարչական դատավարության մեկ այլ տեսակի հատուկ վարույթի, այն է՝ ընտրական իրավունքի պաշտպանության գործերով ընտրական և հանրաքվեների հանձնաժողովների գործունեության վրա, այսինքն՝ սահմանել, որ որևէ օրենքի հակասելու դեպքում սրանց գործողությունները (անգործությունը) և անվավեր են ճանաչվում՝ անկախ կողմերի դիրքորոշումներից:

Ըստ ՎԴՕ 136-րդ հոդվածի 1-ին մասի՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու գործերով վարույթ հարուցելու համար դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ այդ ակտերով խախտվել են ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում, մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային իրավունքի նորմերով, ինչպես նաև ՀՀ օրենքներում ամրագրված իր իրավունքները (ընդգծումն իմն է՝ Գ.Պ.): Մինչդեռ, արտասահմանյան, այդ թվում՝ հետխորհրդային երկրների փորձը վկայում է, որ ՀՀ-ում

սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման այս խնդիրը թերի է լուծված, քանի որ մեր օրենսդրությամբ համապատասխան՝ միայն քաղաքացին, և այն էլ՝ միայն իր սուբյեկտիվ իրավունքի խախտման սահմանադրականության հարցով կարող է դիմել դատարան: Այլ քաղաքացիներ կամ կազմակերպություններ չեն կարող այս հարցով դիմել և հասնել այլ անձանց իրավունքների դատական պաշտպանության կամ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության ստուգմանը: Սա նշանակում է, որ, փաստորեն, անիրագործելի է մնում ազատ ընտրությունների և հանրաքվեների միջոցով ժողովրդի իշխանությունը՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, իրականացնելու մասին սահմանադրական դրույթը (Սահմանադրության 2-րդ և 3-րդ հոդվածներ): Կարծում ենք, որ ՎԴՕ-ում պետք է ձևակերպել, որ նորմատիվ ակտերի իրավաչափության և ընտրական խախտումների սահմանադրականության ստուգման վերաբերյալ վեճերով վարչական դատարան դիմելու իրավունք ունի «յուրաքանչյուր ոք»: Սա հնարավորություն կտա վարչական մրցակցային դատավարությունում պարզել և վերացնել ոչ իրավաչափ բոլոր ակտերի գոյությունը և մեր ընտրական համակարգը հարիր դարձնել ժողովրդավարական պետությանը:

Նորմատիվ ակտերի ստուգման վերաբերյալ գործերով կողմերի մրցակցության հետ կապված մյուս առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն վարչական դատավարության կարգով քննարկվող մյուս գործերի՝ այս վարույթում չի պահանջվում պարզել գործի կոնկրետ հանգամանքները կամ այդ նպատակով ձեռք բերել և հետազոտել ապացույցներ՝ հարցաքննել վկաներ, նշանակել փորձաքննություն, հրավիրել փորձագետ, հետազոտել իրեղեն ապացույցներ և այլն: Դատարանի խնդիրն այստեղ կայանում է վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի իրավասությունը և իրավական ակտի կամ դրա մասի՝ օրենքներին կամ առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին համապատասխանությունն ստուգելու մեջ: Դրա համար էլ դատարանն այս վարույթում հիմնականում չսում է գործին մասնակցող անձանց բացատրությունները և ստուգում է նորմատիվ ակտի հատկանիշները, տալիս է դրա իրավական գնահատականը՝ ելնելով վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի իրավական կարգավիճակը սահմանող գրավոր ապացույցներից՝ օրենքների տեքստերից: Այսպիսով, վարչական դատավարությունում, որը Հայաստանում հիմնադրվել է վեֆին տարիներին, մրցակցության սկզբունքն ունի որոշ իրամայականներ, որոնք հանգում են հետևյալներին. ա) մրցող կողմերից մեկը պարտադիր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններն են կամ դրանց պաշտոնատար անձինք, բ) գործին

մասնակցող անձինք իրավունք ունեն մինչև դատաքննությունն իրազեկ դառնալ միմյանց փաստարկներին, գ) գործին մասնակցող յուրաքանչյուր անձի համար երաշխավորվում է դատարանին ապացույցներ ներկայացնելու իրավունք, դ) գործին մասնակցող յուրաքանչյուր անձի համար երաշխավորվում է մյուս կողմին ապացույցներ ներկայացնելու իրավունք, ե) գործին մասնակցող անձանց համար ապահովվում է միջնորդություններ ամելու իրավունք, զ) կողմերն իրավունք ունեն արտահայտելու իրենց փաստարկներն ու դատողությունները, է) նրանց համար ապահովվում է գործի քննության ժամանակ ծագող բոլոր հարցերի և ապացույցների ներկայացնելու կապակցությամբ բացատրություններ տալու և առարկություններ անելու իրավունք, ը) մրցակցող կողմերն են կրում դատավարական գործողությունների կատարման կամ չկատարման, այդ թվում՝ այն հանգամանքների չապացուցման բացասական հետևանքները, որոնք նրանք էին պարտավոր ապացուցել (ՎՊՕ 26-րդ հոդվ. 1-ին մաս):

Վարչական դատավարությունում կողմերի ազատ և անկաշկանդ մրցակցությունից բացի՝ դատարանին օրենքով վերապահված է մրցակցության իրական հնարավորության պայմաններ ստեղծելու և մրցակցությանն ակտիվ մասնակցելու նախաձեռնություն: Անկախ և միայն Սահմանադրությանն ու օրենքներին ենթարկվող դատարանը (միանձնյա կամ կոլեգիալ) վարչական դատավարությունում կազմակերպում և ղեկավարում է դատական միստը՝ ապահովելով կարգը դատական միստում, ստեղծում է պայմաններ ապացույցների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտման համար, կատարում է գործի պատշաճ քննությունն ու լուծումն ապահովելուն ուղղված այլ գործողություններ, դատավարության մասնակիցներին և վարչական դատավարությունում այլ անձանց պարզաբանում է նրանց իրավունքներն ու պատականությունները, դատաքննությունն անցկացնում է այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են կողմերի ազատ մրցակցությունը, պարզում է գործի ճիշտ լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, անհրաժեշտության դեպքում օժանդակում է կողմերին իրենց իրավունքների և պարտականությունների իրացման, մասնավորապես՝ ապացույցների ձեռքբերման հարցում, ապացուցողական գործունեության ընթացքում և ընդհանրապես ապահովում է կողմերի դատավարական իրավահավասարությունը, որոնք երաշխիք են արդարացի, օրինական ու հիմնավորված վճիռների կայացման համար: Այնպես որ, վարչական դատավարության կառուցման հիմքում դրված մրցակցության սկզբունք-կառուցակարգը դատավարության այդ տեսակը դարձնում է քննչական տարրեր պարունակող մրցակցային, այսինքն՝ «խառը» դատավարություն:

¹ Վարչական դատարանի և վարչական դատավարության՝ որպես արդարադատության առանձին տեսակի, հիմնադրման մասին հայեցակետի ծագման և զարգացման պատմությունը տե՛ս Чечот Д.М. Административная юстиция. М., 1973. Рязановский В.А. Единство процесса. М., 1996, էջեր 18-31, Скутович В.В. Очерки истории и теории советской административной юстиции. Гродно, 1992, Туманов Л.В. Рассмотрение судами дел, возникающих из публично-правовых отношений. Тверь, 1998, Գ. Դանիելյան, Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները: Երևան, «ԱՌՏ», 2004:

² Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Դատարանը և քաղաքացիական դատավարությունը Արևելյան Հայաստանում XIX-XX դարերում: Եր. համալս. հրատ., Երևան-2001, էջեր 293-312:

³ Ներկայումս վարչական դատավարության առանձին օրենսգրքեր ունեն Լեհաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Վրաստանը, Ղազախստանը (վերջին օրենսգրքի նախագծի հեղինակը հայ է՝ Վ.Գ. Թաթարյան), ՌԴ-ում այն դեռևս նախագիծ է:

⁴ Տե՛ս Хореев А.А. Принципы производства по делам об административных правонарушениях. Автореф. ... дисс. канд. юрид. наук. М., 2009, էջ 17:

⁵ Տե՛ս Իրավ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Օթթո Լուիսերիանը, Ռյուդիգեր Ռուբել, Վոլֆգանգ Ռայներս, Ուդեցույց Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունքի: Երևան, 2009, էջ 9:

⁶ Նշենք, որ ՌԴ օրենսդրությունից ավանդաբար օգտվող Հայաստանը այս հարցում մեկ քայլ առաջ է անցել նրանից: ՌԴ-ում վարչական դատավարության օրենսգիրք դեռևս չի ընդունվել, և վարչաիրավական հարաբերություններից ծագող հանրային-իրավական բնույթի գործերը դեռևս քննվում են վարչական իրավախախտումների վերաբերյալ և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի կանոններով:

«Հատուկ վարույթներ» վերտառությունն ավանդաբար և մեկ դարից էլ ավելի կիրառվել և այժմ էլ կիրառվում է քաղաքացիական դատավարությունում նյութաիրավական առումով անվիճելի բնույթ ունեցող գործերի նկատմամբ (Քաղ. դատ. օր. 27-36¹-րդ գլուխներ), և ՎԴՕ-ում դրա կրկնությունը բոլորովին անհարկի է: Այստեղ պետք էր ընդամենն ընդգծել վարչաիրավական հարաբերություններից ծագող և օրենսգրքում տեղ գտած «Առանձին տեսակի գործերով վարույթների առանձնահատկությունները»: Հիշյալ վերտառության պատճառով այսօր իրավագետներն ու պրակտիկ իրավաբանները դժվարանում են իրարից առանձնացնել քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության կարգով քննվող և բոլորովին առանձին բովանդակություն ու քննության կարգ ունեցող «Հատուկ վարույթի գործեր»-ը:

⁷ Տե՛ս Гражданское процессуальное право России. Отв. ред. Заслуженный юрист РСФСР, докт. юрид. наук., проф. Шакарян М.С., «Былина», М., 1999, էջեր 279-291, Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն: Եր. համալս. հրատ., Եր., 2007, էջեր 496-503:

⁸ Տե՛ս Նշվ. Ուդեցույցը, էջ 70:

⁹ Դատավարության մասնակիցների «իրենց լսել տալու» կամ «լսվելու իրավունքի» մասին մանրամասն տե՛ս Ա.Գ. Դատյան. Гражданский процесс в Германии и странах СНГ. Изд. «Haanet». Ер.-2000, էջեր 86-87, 94-99: